

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԳԵՏԱԿԻՆ ԱՍԱՅՈՒԱԾՔՆԵՐԸ

Գրեց՝ ԽԱԼԻԼ ԺՊՐԱՆ  
Թարգմ. ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Հովիտին մէջէն քալեցի, մինչ՝ ծագող արշալոյսը  
կը խօսէր գաղտնիքը յաւերժութեան:  
Ու հոն՝ գետակ մը իր վազքին մէջ կ'երգէր,  
կը կանչէր ու կ'ըսէր...

Կեանքը միայն գուարթութիւն չէ,  
Կեանքը ըղձանք է վճռակամութիւն է:

Իմաստութիւնը մէջը չէ բառերուն,  
Իմաստութիւնը ճշանակութիւնն է ի մէջ բառերուն:

Մեծութիւնը բարձր դիրքի մէջ չէ,  
Մեծութիւնը անոր է, որ դիրքը կը մերժէ:

Մարդ մը ազնուագարմ չէ միջոցաւ իր նախահայրերուն,  
Քանի՜ ազնուականներ ժառանգորդներն են մարդասպաններու:

Ոչ ամէն շղթայուած ենթարկուած է կամ նուաճուած,  
Կայ ժամանակ ուր շղթան աւելի վեհ է, քան զմանեակն:

Դրախտը ապաշխարանքի մէջ չէ,  
Դրախտը մաքուր սրտի մէջ է:

Դժոխքը չարչարանքի մէջ չէ,  
Դժոխքը պարապ սրտի մէջ է:

Հարստութիւնը միայն դրամի մէջ չէ,  
Քանի՜ թափառողներ ամենահարուստն են մարդոց մէջ:

Ոչ ամէն աղքատ արհամարհուած է,  
Աշխարհի հարստութիւնը նկանակ մը հացի եւ կրկնոցի մէջ է:

Գեղեցկութիւնը դէմքին մէջ չէ,  
Գեղեցկութիւնը լոյսն է սրտին մէջ:

Կատարելութիւնը հոգիի մաքրութեան համար չէ,  
Կրնայ եւ առաքինութիւն ըլլալ մեղքի մէջ...:

Ահա թէ ի՞նչ ըսաւ գետակը իր ափի ծառերուն...,  
Գուցէ ինչ որ գետակը երգեց, մաս կը կազմէր ծովի գաղտնիքներուն: